Կարգապահական գործ թիվ ԿԳ-21023

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի մարտի 15-ի թիվ 11-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/04-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանը, Մարինե Ֆարմանյանի, Ռուբեն Հակոբյանի, Մանե Կարապետյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Միքայելի Սուքիասյանի **(արտոնագիր՝ թիվ 1251)** (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Թինա Գրիգորյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)** ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)** ներկայացրած դիմումով հայտնել է, որ փաստաբան Արթուր Սուքիասյանը, որպես Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի **(այսուհետ՝ ՀՊԳ)** հանրային պաշտպան, իրականացրել է իր իրավունքների պաշտպանությունը թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով:

Ըստ Դիմողի՝ Ա. Սուքիասյանն իր կողմից նշված հակափաստարկները չի ներկայացրել դատարանին, տարբեր պատճառաբանություններով չի ներկայացրել երեխայի տեսակցության կարգ սահմանելու հայցի վերաբերյալ պատասխան, խուսափել է առարկություն ներկայացնելուց, որի պատճառով այն ներկայացրել է անձամբ:

Բացի այդ, Դիմողի պնդմամբ, Ա. Սուքիասյանը հրաժարվել է ներկայացնել հակընդդեմ հայց՝ երեխայի բնակության վայրը որոշելու և ալիմենտի պահանջի մասին, պատճառաբանելով, որ դա անհրաժեշտ է ներկայացնել հայրությունը ճանաչվելուց հետո, սակայն վճիռն օրինական ուժ ստանալուց հետո ևս այն չի ներկայացրել՝ արձակուրդ գնալու պատճառաբանությամբ, իսկ հետագայում էլ ընդհանրապես հրաժարվել է իրավաբանական օգնություն ցուցաբերելուց:

Դիմողը խնդրել է քննարկել և գնահատական տալ Ա. Սուքիասյանի գործողություններին:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 230-Ա/ԿԳ-21023 որոշմամբ փաստաբան Արթուր Միքայելի Սուքիասյանի նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝** «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** ***2.7.2 և 3.5.5 ենթակետերի*** **խախտման հատկանիշներով:**

2021 թվականի սեպտեմբերի 30-ին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գայանե Ալիխանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

28.10.2021թ. /մուտք թիվ 2373-21/ բացատրագրով, Թինա Գրիգորյանը հայտնել է, որ ծանոթացել է Արթուր Սուքիասյանի ներկայացրած հակիրճ բացատրությանը և նշել, որ նա բացահայտ սուտ տեղեկություններ է հաղորդում և այդ մասով ներկայացնում է բացատրություն:

Հայտնել է, որ թիվ ԼԴ/4901/02/20 գործով հանդիսացել է պատասխանող, որով դիմել է հանրային պաշտպանի գրասենյակ: Իրեն որպես պաշտպան է նշանակվել Արթուր Սուքիասյանը: Հայցը վերաբերվել է երեխայի հայրության ճանաչմանը և տեսակցության կարգ սահմանելուն: Հենց առաջին նիստից՝ 09.02.21թ.-ին, փաստաբանին առաջարկել է ներկայացնել գրավոր պատասխան, առարկություն հայցի դեմ, սակայն Ա. Սուքիասյանը միտումնավոր չի ներկայացրել: Առարկությունը վերաբերվել է ոչ թե հայրությանը, այլ տեսակցության կարգին: Ա. Սուքիասյանը մասնակցել է երկու դատական նիստերի՝ 09.02.21թ.-ի և 20.04.21թ.-ի նիստերին և այդ ընթացքում ոչինչ չի արել: Մի տող նույնիսկ չի գրել, սևագրել: Դրանից հետո, 20.04.21թ.-ին դատական նիստում հայցվորի պաշտպանը առաջարկել է վարույթները առանձնացնել, ինչին դիմողը դեմ է եղել և այդ մասին էլ ասել է փաստաբանին, սակայն վերջինս չի առարկել և վարույթները՝ Ա. Սուքիասյանի նախաձեռնությամբ, դատարանը առանձնացրել է, հայցերը քննելով առանձին վարույթներում: Այնպես, որ փաստաբանը մինչև գործի վարույթը առանձնացնելը, երկու ամիս ժամանակ ունեցել է հայց ներկայացնելու, որը դիմողը նրան բազմիցս առաջարկել է, սակայն ինչ-ինչ պատճառներով դա չի արել:

Դիմողը նաև հայտնել է, որ բացատրության մեջ Ա. Սուքիասյանը հորինել է, որ իբր թե ինքը առարկել է դատական ծախսերը իրենից բռնագանձելու դեմ՝ ներկայացնելով մի շարք փաստարկներ, սակայն դատարանը հայցը բավարարելով՝ վճռել է իրենից բռնագանձել նաև դատական ծախսերը, ինչն էլ իբր թե առաջացրել

է դիմողի դժգոհությունը: Հայտնել է նաև, որ ի սկզբանե տեղեկացված է եղել, որ գործը բավարարվելու դեպքում ծախսերը իրենից էին պահելու /չնայած չունի իրավաբանական կրթություն/, բայց այդքանը հասկանում է, դատարանը դա իրեն բացատրել է: Այնպես, որ դա չէ իր դժգոհության պատճառը: Դժգոհության պատճառները արդեն հայտնել է, որ հենց առաջին օրվանից կոպտել, վիրավերել է իրեն, չի ներկայացրել հակափաստարկներ: Հենց առաջին նիստին մինչև գործի վարույթն առանձնացնելը, առաջարկել է գրել հայց՝ երեխայի բնակության վայրի հետ կապված, սակայն պատճառաբանել է, որ բնակությունը ինչ կապ ունի հայրության հետ, հետո էլ պատճառաբանել, որ սպասի վճիռը մտնի օրինական ուժի մեջ, դրանից հետո էլ պատճառաբանել, որ գնում է արձակուրդ, որ կարողա ինքը նրա գործի պատճառով արձակուրդ չգնա, հետո էլ պատճառաբանել, որ նրան շուտ պետք է հիշեցներ, որ գրի, հետո էլ դատական նիստի օրը՝ 27.07.21թ.-ին դատական նիստերի դահլիճի մոտ սկսել է վիճաբանել իր հետ, ավելացրել, որ հրաժարվում է իրենից, լիազորագիրը որ բերել է հետը, շպրտել ու հետ գնացել, իրեն թողնելով մենակ դատարանում՝ անպաշտպան: Վիճաբանությունը առաջացել է նրանից, որ կրկին առաջարկել է հայց ներկայացնել:

Դիմողը նաև նշել է, որ թե որտեղից պետք է իմանար, որ նորից պետք է հանրային պաշտպանի գրասենյակ դիմի, որ հայց գրեն, եթե իր պաշտպանն է ու իրեն չի բացատրում, հենց այդ թեմայով խոսում է՝ վիրավորում է, զանգերին չի պատասխանում: Բացի այդ, նա է եղել իր պաշտպանը, ում պետք է լիազորագիր տար, ումից տեղեկանար կամ ինչ է նշանակում գրավոր չի դիմել իրեն, որ հայց ներկայացնի: Հավելել է, որ եթե այդքանը իմանար, ապա իր շահերը կպաշտպաներ, կամ որտեղից իմանար որ փաստաբանը ժամանակ է ձգում, որ հետո փորձի ստերով արդարանալ:

Դիմողի պնդմամբ փաստաբանը իր բացատրության մեջ նշել է, որ իբր թե իրեն պատահական է տեսել դատարանում, ի՞նչ է ինքը բանուգործ չունի, որ ամբողջ օրը դատարաններում է և իրեն այնտեղ տեսել է: Դա ևս ֆանտազիայի ժանրից է և փաստաբանը փորձում է արդարանալ:

Եզրափակելով Դիմողը նշել է, որ զարմանալի է, որ փոխարենը այս ամենից հետո փաստաբանը իրեն վատ զգա, գիտակցի, որ չի կարելի այդպես վարվել քաղաքացու հետ, ով իր և իր երեխայի իրավունքներն է մի կերպ պաշտպանում, դեռ ավելին փորձում է արդարանալ և ցեխ շպրտել մարդկանց վրա, իբր թե ինքն է մեղավոր, որ գրավոր փաստաբանին չի դիմել, չի հիշեցրել և այլն: Կրկին անգամ խնդրել է, որ գնահատական տրվի փաստաբանի այս գործողություններին, պետությունը նրանց վճարում է, որ անպաշտպան մարդկանց պաշտպանեն, ոչ թե...:

Բացատրագրին կից ներկայացրել է լիազորագրի պատճենը:

Կարգապահական գործը նախապատրաստողին ներկայացրած գրավոր բացատրությամբ Դիմողը տվել է նույնաբովանդակ բացատրություն և կից ներկայացրել է լիազորագրի պատճենը և արտատպվածք հեռախոսից՝ խոսազանգ ունենալու լուսապատճենը, որով վերջինիս պնդմամբ հաստատվում է այն փաստը, որ դատական նիստի նախորդ օրը՝ 26.07.21թ.-ին իրենք զրուցել են, պատասխանողը տեղյակ է եղել նիստի ժամանակի մասին և իրեն պատահական չի

տեսել դատարանում, ինչպես նա է ներկայացնում:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Արթուր Սուքիասյանին՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք)** 39.3 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթի հարուցման հարցի քննարկման ընթացքում առաջարկվել է ներկայացնել բացատրություն դիմումի վերաբերյալ:

17.09.2021թ. ներկայացված բացատրությամբ փաստաբան Ա. Սուքիասյանը հայտնել է, որ Թինա Գրիգորյանը ՀՊԳ դիմել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով վերջինիս ներկայացուցչությունն իրականացնելու համար, որի շրջանակներում վերջինս հանդիսացել է պատասխանող: Դիմողի դեմ ներկայացված է եղել երեխայի հայրության որոշման պահանջի մասին հայցադիմում:

Ա. Սուքիասյանը նշել է, որ Թինա Գրիգորյանի կողմից ՀՊԳ դիմելուց հետո նշված քաղաքացիական գործով տեղի են ունեցել երկու դատական նիստեր, որոնց ինքը մասնակցել է:

Դիմողի հակափաստարկները դատարանին չներկայացնելու հետ կապված պարզաբանել է, որ թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով հայցի առարկան հանդիսացել է երեխայի հայրության որոշումը, նշված պահանջի հետ կապված Դիմողն առարկություն չի ունեցել: Ըստ փաստաբանի՝ հենց Դիմողն է դատարանում հայտնել, որ հայցվորը՝ Հայկ Մովսիսյանը հանդիսանում է իր երեխայի հայրը և ընդունել է հայցը, իսկ դիմողի կողմից որպես «հակափաստարկներ» ներկայացվել են այն ընտանեկան խնդիրները, որոնք վերջինս ունեցել է հայցվոր Հայկ Մովսիսյանի հետ համատեղ ամուսնության ընթացքում: Նշված հանգամանքին ինքը չի անդրադարձել, քանի որ դրանք ներկայացված պահանջի դեմ առարկություն չեն հանդիսացել, և թեև Դիմողը դրանք անձամբ ներկայացրել է դատարանին, սակայն քննվող վեճի հետ որևէ կապ չեն ունեցել:

Ա. Սուքիասյանը նշել է, որ գործի դատաքննության ժամանակ առարկել է դատական ծախսերը Դիմողից բռնագանձելու դեմ՝ ներկայացնելով մի շարք փաստարկներ, սակայն, ներկայացված հայցը բավարարելով, դատարանը վճռել է Դիմողից բռնագանձել նաև դատական ծախսերի գումարները, ինչն էլ առաջացրել է Դիմողի դժգոհությունն իրենից:

Անդրադառնալով երեխայի տեսակցության կարգ սահմանելու հարցի վերաբերյալ պատասխան չներկայացնելու Դիմողի պնդմանը՝ Ա. Սուքիասյանը նշել է, որ չի ներկայացրել այն պատճառով, որ թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով դատարանը 20.04.2021թ. որոշում է կայացրել գործից մաս առանձնացնելու մասին, և երեխայի հետ շփման կարգ սահմանելու պահանջի մասով գործը քննվել է մեկ այլ քաղաքացիական գործի շրջանակներում: Առանձնացված քաղաքացիական գործով դատական ներկայացուցչություն իրականացնելու համար Թինա Գրիգորյանը ՀՊԳ չի դիմել, իրեն նշված գործով ներկայացուցչություն իրականացնելու լիազորագիր չի տվել, դատական նիստերի մասին իրեն չի հայտնել և դատարանն իրեն ծանուցագիր չի ուղարկել:

Երեխայի բնակության վայրը որոշելու և ալիմենտի պահանջների մասին նույն գործով հակընդդեմ հայց ներկայացնելու Դիմողի առաջարկների առնչությամբ Ա. Սուքիասյանը պնդել է, որ երեխայի բնակության վայրը որոշելու հետ կապված Դիմողն իրեն ոչինչ չի ասել, նման գրավոր դիմում իրեն կամ ՀՊԳ չի ներկայացրել, ՀՊԳ կողմից նշված պահանջի հետ կապված որևէ հանձնարարություն չի ստացել: Ըստ փաստաբանի՝ Դիմողն իրեն հայտնել է միայն ալիմենտի բռնագանձման պահանջի մասին հայցադիմում ներկայացնելու իր ցանկության մասին, որի կապակցությամբ նրան պարզաբանել է, որ երեխայի ապրուստի միջոց բռնագանձելու հայցը կարող է ներկայացվել երեխայի հայրության որոշման վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, սակայն թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով վճռի օրինական ուժի մտնելուց հետո Դիմողն ալիմենտի բռնագանձման պահանջի մասին հայցադիմում ներկայացնելու հարցով իրեն չի դիմել, նշված հարցով չի դիմել նաև ՀՊԳ և նշված հարցով հայցադիմում կազմելու ՀՊԳ ղեկավարի հանձնարարություն կամ որոշում չի ստացել:

Անդրադառնալով արձակուրդում գտնվելու պատճառաբանությամբ ալիմենտի հարցով հայցադիմում չկազմելու Դիմողի պնդմանը՝ Ա. Սուքիասյանը հայտնել է, որ 2021թ. հուլիսի 29-ին կամ 30-ին դատարանում պատահական հանդիպել է Դիմողին, որն իրեն ասել է ալիմենտի պահանջի վերաբերյալ հայցադիմում ներկայացնելու իր պահանջի մասին: Դիմողին տեղեկացրել է, որ 30.07.2021թ.-ից 10 աշխատանքային օր գտնվելու է արձակուրդում և առաջարկել է նշված հարցով դիմել կամ արձակուրդի ավարտից հետո կամ նույն հարցով դիմել ՀՊԳ, քանի որ հայցադիմումը կարող է կազմվել նաև այլ հանրային պաշտպանի կողմից:

Ամփոփելով ներկայացվածը՝ Ա. Սուքիասյանը պնդել է, որ Դիմողի պնդումներն իրականությանը չեն համապատասխանում, ինքը ցուցաբերել է պատշաճ իրավաբանական օգնություն:

Կարգապահական գործը նախապատրաստողին 20.11.2021թ.-ին ներկայացված բացատրությամբ Ա. Սուքիասյանը հայտնել է, որ ամբողջությամբ պնդում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ներկայացված բացատրության մեջ նշված դիրքորոշումը:

Հայտնել է, որ Թինա Գրիգորյանի կողմից ներկայացված որևէ փաստ չի ընդունում և պնդում է, որ «Փաստաբանության մասին» օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի որևէ խախտում իր կողմից թույլ չի տրվել: Իր կողմից Թինա Գրիգորյանին տրամադրվել է պատշաճ իրավաբանական օգնություն:

Խորհրդի նիստին ներկայացել է Փաստաբանը և ըստ էության պնդել է գրավոր բացատրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2021 թվականի նոյեմբերի 29-ին կարգապահական գործը նախապատրաստող անձ Գայանե Ալիխանյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

2021 թվականի դեկտեմբերի 3-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2022 թվականի մարտի 15-ի ժամը՝ 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զանքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով պատասխանող Թինա Գրիգորյանի իրավունքների պաշտպանությունն իրականացրել է փաստաբան Արթուր Սուքիասյանը, որպես Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպան: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

2. Թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով պատասխանող Թինա Գրիգորյանի դեմ ներկայացված է եղել երեխայի հայրության որոշման պահանջի մասին հայցադիմում: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

3. Թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում 20.04.2021թ.-ին դատարանի կողմից ընդունվել է որոշում գործից մաս առանձնացնելու մասին, որով որոշվել է թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործից առանձնացնել երեխայի հայրության որոշման պահանջի մասով գործի վարույթը, այս պահանջի մասով գործը թողնելով ԼԴ/4901/02/20 համարի տակ, թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով ըստ հայցի Հայկ Զավենի Մովսիսյանի ընդդեմ Թինա Սարգսի Գրիգորյանի՝ երեխայի հետ շփման կարգ սահմանելու պահանջի մասով, շնորհել նոր համար: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ ինչպես նաև «datalex.am» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

4. Թիվ ԼԴ/2155/02/21 քաղաքացիական գործով ըստ հայցի Հայկ Զավենի Մովսիսյանի ընդդեմ Թինա Սարգսի Գրիգորյանի՝ երեխայի հետ շփման կարգ սահմանելու պահանջի մասով ներկայումս գտնվում է ընթացքի մեջ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի բացատրությունով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

5. Փաստաբան Արթուր Սուքիասյանը 2021 թվականի հոկտեմբերի 8-ի գրությամբ տեղեկացրել է Թինա Գրիգորյանին առ այն, որ ինքը չի կարող իրականացնել նրա շահերի պաշտպանությունը և հայտնել է, որ նա կարող է դիմել հանրային պաշտպանի գրասենյակ փաստաբանի միջամտությունը պահանջող գործողությունների կատարման անհրաժեշտության դեպքում: *Նշված փաստը հաստատվում է 08.02.2022թ. Խորհրդի նիստին Դիմողի և Փաստաբանի կողմից տրված բացատրություններով:*

6. Այն դեպքում, երբ հանրային պաշտպանի մասնակցությամբ ընթացող գործի շրջանակներում հայցի առարկաներից մեկով առանձնացվում է մեկ այլ վարույթ (մեկ այլ գործ), ապա այդ նոր գործով հանրային պաշտպան նշանակելու (ներգրավելու) համար անհրաժեշտ է, որ տվյալ գործով անվճար իրավաբանական օգնություն հայցող անձի դիմումը: *Նշված փաստը հաստատվում է Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 2022 թվականի մարտի 9-ի թիվ 06/1870 գրությամբ և Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ, 43-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի և Պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի» 39-րդ-րդ կետի իրավակարգավորումներով:*

7. Դիմող Թինա Գրիգորյանը Պալատի հանրային պաշտպանի գրասենյակ չի ներկայացրել նոր դիմում Թիվ ԼԴ/2155/02/21 քաղաքացիական գործով իրեն հանրային պաշտպան տրամադրելու վերաբերյալ: *Նշված փաստը հաստատվում է 08.02.2022թ. Խորհրդի նիստին Դիմողի և Փաստաբանի կողմից տրված բացատրություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Սուքիասյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.09.2021թ. թիվ 230-Ա/ԿԳ-21023 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Արթուր Սուքիասյանը նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և

օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե

- *արդյո՞ք փաստաբան Արթուր Սուքիասյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել վստահորդին թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով,*
- *Արդյո՞ք փաստաբան Արթուր Սուքիասյանը թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով որպես մաս առանձնացված գործով իրավաբանական օգնություն է ցուցաբերել կամ պետք է ցուցաբերեր Դիմողին, և ըստ այդմ՝ առկա՞ են Արթուր Սուքիասյանի գործողություններում (անգործություն) Օրենքի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» պահանջների խախտում:*

Նշված կանոններով վստահորդի շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով փաստաբանի համար սահմանվում են որոշակի առանձնահատուկ պարտականություններ, որոնք կապված են փաստաբանի մասնագիտական կարողությունների և հմտությունների ու դրանցից բխող պատշաճ գործողությունների կատարման հետ:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա գրավոր ապացույցները, լսելով կողմերի բացատրությունները, արձանագրում է, որ Դիմողի կողմից բավարար չափով փաստարկված և հիմնավորված չեն այն պնդումները, համաձայն որի Փաստաբանը բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել իրեն:

Ներկայացված ապացույցների շրջանակներում Խորհուրդը փաստում է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպան, փաստաբան Արթուր Սուքիասյանն ըստ էության ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունն թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով, որի շրջանակներում քննարկվում էր երեխայի հայրության որոշման պահանջը:

Արթուր Սուքիասյանը մասնակցել է երկու դատական նիստերի՝ 09.02.21թ. և 20.04.21թ. նիստերին, որոնց ընթացքում Դիմողը դատարանում հայտնել, որ հայցվորը՝ Հայկ Մովսիսյանը հանդիսանում է իր երեխայի հայրը և ընդունել է հայցը:

Այսպիսով, գնահատելով թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, Խորհուրդը փաստում է, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, որ Փաստաբանը՝ որպես հանրային պաշտպան Թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործով ցույց չի տվել բարեխիղճ իրավական օգնություն: Ավելին, կողմերի տված բացատրությունների շրջանակներում հիմնավորվում է Փաստաբանի կողմից ստանձնած պարտավորությունները կատարված լինելու հանգամանքը:

Վերը նշված թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործից հետագայում առանձնացվել է երեխայի հետ շփման կարգ սահմանելու պահանջի մասը և քննվել է Թիվ ԼԴ/2155/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից երեխայի տեսակցության կարգ սահմանելու հայցի վերաբերյալ պատասխան չներկայացնելու վերաբերյալ հանգամանքին, անհրաժեշտ է նշել, որ **Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝** *անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝*

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումի կամ որոշման հիման վրա կամ սույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում քաղաքացու դիմումի հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշումը կամ դիմումը բավարարելու և գործը հանրային պաշտպանին հանձնելու մասին կամ հանրային պաշտպանություն իրականացնելու դիմումը մերժելու մասին, երբ այն նախատեսված չէ սույն օրենքի 41-րդ հոդվածով:*

Պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգ»-ի 39-րդ կետը սահմանում է, որ *Դիմողին անվճար իրավաբանական օգնություն լրամադրելու հիմքը, նրա կողմից ստորագրված դիմումն է:*

Նշված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է քաղաքացու համապատասխան դիմումը, որի քննարկման արդյունքում և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից կայացված որոշման պարագայում **հանրային պաշտպանը կարող է կոնկրետ գործով քաղաքացուն տրամադրել անվճար իրավաբանական օգնություն՝** անկախ միացված հայցապահանջների քանակից:

Այսինքն, միացված պահանջներից առանձին վարույթներում գործն

առանձնացվելու դեպքում, առաջացած նոր գործով քաղաքացու շահերը ներկայացնելու համար հանրային պաշտպանը պետք է ունենա Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի համապատասխան հանձնարարությունը (որոշումը), իսկ նման հանձնարարության հիմք կարող է հանդիսանալ քաղաքացու դիմումը:

Տվյալ դեպքում, Խորհուրդն արձանագրում է, որ քաղաքացիական գործն ըստ հայցի Հայկ Զավենի Մովսիսյանի ընդդեմ Թինա Սարգսի Գրիգորյանի՝ երեխայի հետ շփման կարգ սահմանելու պահանջի մասով, առանձնացվել է Թիվ ԼԴ/4901/02/20 քաղաքացիական գործից և դրան շնորհվել է Թիվ ԼԴ/2155/02/21 համարը: Նման պայմաններում, Դիմողը Պալատի հանրային պաշտպանի գրասենյակ՝ Օրենքին և Պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմանը համապատասխան, պետք է ներկայացներ դիմում իրեն Թիվ ԼԴ/2155/02/21 քաղաքացիական գործով հանրային պաշտպան տրամադրելու նպատակով, ինչը Դիմողն ըստ էության չի կատարել: Հետևաբար, Փաստաբանը՝ որպես հանրային պաշտպան համապատասխան հանձնարարության բացակայության պայմաններում իրավասու չեր գործելու թիվ ԼԴ/2155/02/21 քաղաքացիական գործում և չէր կարող ներկայացնել Դիմողի շահերը այդ գործում:

Վերը նշված պատճառաբանություններով, հերքվում են նաև Դիմողի կողմից նշված՝ Երեխայի բնակության վայրը որոշելու և ալիմենտի պահանջելու վերաբերյալ Փաստաբանի կողմից դրսևորած անգործությունը:

Հարկ է նաև նշել, որ Փաստաբան Արթուր Սուքիասյանը 2021 թվականի հոկտեմբերի 8-ի գրությամբ տեղեկացրել է Թինա Գրիգորյանին առ այն, որ ինքը չի կարող իրականացնել նրա շահերի պաշտպանությունը և հայտնել է, որ նա կարող է դիմել հանրային պաշտպանի գրասենյակ փաստաբանի միջամտությունը պահանջող գործողությունների կատարման անհրաժեշտության դեպքում, սակայն Դիմողը կրկին չի դիմել հանրային պաշտպանի գրասենյակ:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:*

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Կարգի 7.2.6-րդ ենթակետի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:*

Նկատի ունենալով, որ դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կարգի 6.1.1-ի ենթակետի 2-րդ կետի, 7.2.5-րդ ենթակետի 2-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արթուր Միքայելի Սուքիասյանի (արտոնագիր՝ թիվ 1251) նկատմամբ թիվ ԿԳ-21023 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

15 մարտի 2022թ.
թիվ ԿԳ/04-Ա
ք. Երևան